

ՊԱՍՏԱՅԻՆ ՄԷՋ

ՆԱԽԱԳԱՀ ԼԱՀՈՒՏ ԵՒ ՎԱՐՉԱՊԵՏ ՀԱՐԻՐԻ ՔՆՆԱՐԿԵՑԻՆ ՇՐՋԱՆԱՅԻՆ ՆՈՐԱԳՈՅՆ ԶԱՐԳԱՅՈՒՄՆԵՐԸ



Նախագահ Վոր. Էմիլ Լահուտ Պասպոյանի պատիվն էր երեկ ընդունել վարչապետ Ռաֆիկ Հարիրիին, որուն հետ քննարկեց շրջանային վարչապետները, յատկապես Իրաքի դեմ գործադրուող աներկիչ պատերազմը:

Քննարկումի առարկայ դարձաւ նաեւ վարչապետ Հարիրիի կատարելիք այցելութիւնները Յունաստան, Պեկին, Գերմանիա, Իտալիա եւ Ֆրանսա: Նշենք, որ վարչապետը արդէն իսկ սկսած է յիշեալ շրջապտոյտին: Ան Յունաստանի մէջ երէկ տեսակցեցաւ նախագահ Սթեֆանոփոլոսի հետ. քննարկուեցան միջին արեւելեան իրադարձութեան կապուած հարցեր:

Նախագահ Լահուտի այցելեց նախկին փոխ վարչապետ, երեսփոխան Միշէլ Սըր: Քննարկուեցան ներքին եւ շրջանային հարցեր եւ քաղաքական տարբեր կեցուածքներ:

Նախագահական պայտուի այցելուներէն եղան երեսփոխաններ, որոնց շարքին՝ Սամի Խաթիպ, Նասիբալլա Ապի Նապըր, Իպրահիմ Պայան, ժրպարան Թոք, Նասէր Քընտիլ, Սամիր Ապար եւ Ճարիտ Խալիպ:

Հանդիպումներուն արժարժուեցան Իրաքի դեմ աներկիչ պատերազմի վարչապետները, պատերազմին նկատմամբ Լիբանոսի մերժողական հաստատ կեցուածքը, ինչպէս նաեւ ներքին միասնականութեան ամրապնդումը եւ տարբեր շրջաններու կարիքները:

Նախագահ Լահուտի այցելեց նաեւ Լիբանան - Ֆրանսա բարեկամութեան յանձնախումբի մէկ պատուիրակութիւնը, որոնց կ'ընկերակցէր Ֆրանսայի տերիտորիալ Կապիտուլացիոն Գերագոյն Խորհուրդին մէջ նախագահ Լահուտի ներկայացուցիչը՝ Շարլ Թըրքը:

Ս. ՎԱՐԴԱՆԱՆՅ ԵԿԵՂԵՑԻ 3ԱՅՏԱՐԱՐՈՒԹԻՒՆ Այսու կը յայտնենք մեր ժողովուրդին, թէ Չորեքշաբթի, 26 Մարտ 2003, երեկոյեան ժամը 6:30ին, Նորաշէնի Ս. Վարդանանց եկեղեցոյ մէջ հսկումի ընթացքին պիտի քարտէս:

ՃՈՒՆԻԷՒ Ս. ՅԱՐՈՒԹԻՒՆ ԵԿԵՂԵՑԻ 3ԱՅՏԱՐԱՐՈՒԹԻՒՆ Ժողովուրդ, Անթիլիասի եւ Չալքայի շրջակայից Ս. Յարութիւն եկեղեցոյ թաղայանութիւնը կու գայ յայտարարելու իր սիրելի ժողովուրդին, թէ յառաջիկայ Չորեքշաբթի, 26-3-2003ին, Սեծ Պահոց Արեւազայի արարողութեան պիտի նախագահէ եւ քարոզէ:

ՍԱՇՏՈՑ ՎՐԴ. ԶՕՊԱՆԵԱՆ Արարողութեան սկիզբ ժամը ձիշդ 8:00ին: Սիրով կը հրահրենք հաւատացեալ ժողովուրդը՝ սոյն հոգեպարար արարողութեան:

ՍԻԿԻՆ ԱՐԱՔՍԻ ԳԱՐՐԻԷԼԵԱՆԻ Տէր եւ տիկին Տիգրան Գարրիէլեան եւ զաւակունք Տէր եւ տիկին Վաչէ Գարրիէլեան եւ զաւակունք Տէր եւ տիկին Անճոնեան Սքայեմ եւ զաւակունք Տէր եւ տիկին Ջաւէն Սամոսեան եւ զաւակունք Տէր եւ տիկին Անդրանիկ Գարրիէլեան եւ զաւակունք Տիկին Անճէլ Գարրիէլեան եւ զաւակունք Տէր եւ տիկին Սարգիս Գարրիէլեան եւ զաւակունք Տիկին Խօթէն Գափանեան եւ զաւակունք Տիկին Փաքիլի Գարրիէլեան եւ զաւակունք եւ համայն ազգայաններ կը գուժեն իրենց ամուսնոյն, հօր, մեծ հօր, եղբոր եւ հարազատին՝

ՍՈՒՐԵՆ ՏԻԳՐԱՆ ԳԱՐՐԻԷԼԵԱՆԻ մահը, որ պատահեցաւ Կիրակի, 23 Մարտ 2003ի երեկոյեան, յետ կարճատեւ հիւանդութեան: Զուգարկաւորութեան արարողութիւնը կատարուեցաւ Երկուշաբթի, 24 Մարտ, կէսօրէ ետք ժամը 3:00ին, Էշրեֆիէի Ս. Յակոբ եկեղեցոյ մէջ, ուրկէ հանգուցեալին մարմինը փոխադրուեցաւ Պուրճ Համուտի Ազգային գերեզմանատունը: ● Սերկայս ընդունիլ իրեն մահապղ: ● Յաւակցութիւնները կ'ընդունուին հանգուցեալին բնաբարանը, Էշրեֆիէ, Թապարիկ, «ժրպարան Ապի Քարան» շէնք, Յրդ յարկ, Երեքշաբթի 25 եւ Չորեքշաբթի 26 Մարտին:

ԱՅՍՕՐ ՅԵՏՄԻՋՕՐԵՒՆ ՄԵԾ ՅՈՅՑ՝ ԹԱՆԳԱՐԱՆԵՆ ԷՍԲՈՒԱ, ՄԱՍՆԱԿՅՈՒԹԵԱՄԲ ԲՈԼՈՐ ԿՈՒՄԱԿՅՈՒԹԻՒՆՆԵՐՈՒՆ

Լիբանանեան եւ մարմինին աշխատանքները կը ծաւալուին երեք ուղղուկներով: Լիբանանեան արաբական եւ միջազգային: Լիբանանեան առումով հարկ է ամբողջական պահել ներքին միասնականութիւնը եւ վարակցիլ Դիմադրութեան, որ պիտի հարաւային Լիբանանի բնագրաւուած մնացեալ հողերը: Յոյցերով, քայլարշաւներով, հանդիպումներով դատարարել Իրաքի դեմ աներկիչ պատերազմին յարձուգումը եւ բռնադատելը, ինչպէս նաեւ բոլոր այն երկիրները, որոնք կ'օժանդակեն Միացեալ Նահանգներուն դիմադրութիւնը ընծայելով անոր: Այս ծիրէն ներս, շրջափակել Իրաքի դեմ բռնադատելու կատարող երկիրներու Պէյրութի դեսպանատունները, ինչպէս նաեւ օգտագործել տնտեսական պնդումները վերջ տալով աներկիչ պատերազմին: Արաբական գետնի վրայ, բոլոր մակար-

ԳԱՅՐԵՒԻ ՄԷՋ, ԱՐԱՐԱԿԱՆ ԼԻԿԱՅԻ ՎԵՅԱԾՈՂՈՎԻՆ

ՆԱԽԱՐԱՐ ՀԱՄՄՈՒՏ ՈՒՆԵՅԱԻ ԲԱԶՄԱԹԻԻ ՏԵՍԱԿՅՈՒԹԻԻ ՆՆԵՐ ԱՐԱԲ ՊԱՇՏՕՆԱԿԻՑՆԵՐՈՒ ՀԵՏ

Արաբական Լիկայի արտաքին գործոց նախարարներու վեհաժողովը երէկ կայացաւ Գահիրէի մէջ, նախագահութեամբ Արաբական Լիկայի ընդհանուր քարտուղար Ամր Մուսուսայի: Ժողովը իր աւարտին հաղորդագրութիւն մը հրատարակեց, ուր պահանջեց Միացեալ Նահանգներէն եւ Բրիտանիայէն անմիջապէս հեռանալ Իրաքէն: Վեհաժողովին մասնակցեցաւ Լիբանանի արտաքին գործոց եւ արտերկրի լիբանանցիներու հարցերու նախարար Մահմուտ Համուտ, որ Գահիրէ հաս-

ՄԵԾ ՊԱՇՏՕՆԱԿԻՑՆԵՐՈՒ ՀԵՏ ՀՈԳԵՒՐ ԽՈՐՀՐԳԾՈՒԹԵԱՆ ՇԱՐՔ ԱՆԹԻԼԻԱՍԻ ՄԷՋ Մեր ժողովուրդի զաւակներուն ազնիւ ուշադրութեան կը յանձնենք, թէ ինչպէս անցնող տարիներուն, այս տարի եւս Ս. Գրիգոր Լուսաւորիչ Մայր տաճարին մէջ տեղի պիտի ունենան Արեւագալի եւ Հսկումի ժամերգութիւններ՝ Չորեքշաբթի եւ Ուրբաթ օրերը: Ժամերգութեան ընթացքին պիտի ունենանք հոգեւոր խորհրդածութեան շարք մը, այս տարի նիւթ ունենալով ԱՍՏՈՒԱՄԱՇՈՒՆՆԵՐ ՄԱՏԵԱՆԸ: Ինչպէս գիտէք, Ն. Ս. Ս. Ս. Արամ Ա. կաթողիկոսի որոշմամբ 2003 տարին հռչակուած է ԱՍՏՈՒԱՄԱՇՈՒՆՆԵՐ ՏԱՐԻ, եւ այս առիթով վեհապետ հայրապետը յատուկ պատգամ մը յղած էր մեր ժողովուրդի զաւակներուն, թէ՛ Աստուածաշունչը աղբիւր է Աստուծոյ յայտնութեան: Աստուածաշունչը առանցքը կը կազմէ եկեղեցոյ կեանքին: Աստուածաշունչը հիմքը կը կազմէ եկեղեցոյ առաքելութեան: Աստուածաշունչը պէտք է կեանքի վերածել ու մեր կեանքին ուղեցոյցը դարձնել: Արեւագալի ժամերգութիւնը պիտի սկսի առաւօտեան ժամը 7:00ին, Հսկումի ժամերգութիւնը՝ երեկոյեան ժամը 5:00ին: Հոգեւոր խորհրդածութիւնները տեղի պիտի ունենան Չորեքշաբթի օրերը՝ առաւօտեան, Արեւագալի արարողութեան աւարտին, իսկ Ուրբաթ օրերը՝ երեկոյեան, Հսկումի արարողութեան աւարտին:

Միաբան հայրերը խորհրդածութիւնները պիտի ներկայացնեն հետեւեալ կարգով: ● Չորեքշաբթի, 26 Մարտ ՍԻՓԱՆ ՎՐԴ. ԷՇՂԵՄԵԱՆ Յովհաննու Աւետարան ● Ուրբաթ, 28 Մարտ ՎԱՐԱԳ ՎՐԴ. ԹՕԹԱՆԵԱՆ Գործք Առաքելոց ● Չորեքշաբթի, 9 Ապրիլ ՅՈՒՄԻԿ ՎՐԴ. ՄԱՐՏԻՐՈՍԵԱՆ Եփեսացիներուն Գամակը ● Ուրբաթ, 11 Ապրիլ ՍԱԿԱՐ ԱՐԴ. ԱԶԳԱՐԵԱՆ Յայտնութիւն Յովհաննու

ՆԱՍԱՐ ԱՅՈ՛, ԺՐԵՒԵՒԻ ՀԱՄԱԶԱՅՆԱԳԻՐ ԿԱՅ, ԲԱՅՅ ԵՐԿՈՒՍՏԵՔ ՅԱՐԳՈՒԵԼՈՒ ՀԱՍԱՐ Միացեալ Նահանգներու պաշտպանութեան նախարար Տոնայտ Ռամաֆելտ մամլոյ ասուլիսի մը ընթացքին յայտարարեց, որ Իրաք չի յարգեր ժընեի համաձայնագիրը, ըստ որուն՝ պատերազմական գերիները հրապարակաւ պէտք չէ «ցուցադրել»:

Միացեալ Նահանգներու պաշտպանութեան նախարար Տոնայտ Ռամաֆելտ մամլոյ ասուլիսի մը ընթացքին յայտարարեց, որ Իրաք չի յարգեր ժընեի համաձայնագիրը, ըստ որուն՝ պատերազմական գերիները հրապարակաւ պէտք չէ «ցուցադրել»:

Միացեալ Նահանգներու պաշտպանութեան նախարար Տոնայտ Ռամաֆելտ մամլոյ ասուլիսի մը ընթացքին յայտարարեց, որ Իրաք չի յարգեր ժընեի համաձայնագիրը, ըստ որուն՝ պատերազմական գերիները հրապարակաւ պէտք չէ «ցուցադրել»:

Միացեալ Նահանգներու պաշտպանութեան նախարար Տոնայտ Ռամաֆելտ մամլոյ ասուլիսի մը ընթացքին յայտարարեց, որ Իրաք չի յարգեր ժընեի համաձայնագիրը, ըստ որուն՝ պատերազմական գերիները հրապարակաւ պէտք չէ «ցուցադրել»:

ՎԵՐՋԱԿԵՍ, ՈՒԱՇԻՆԿՅՐԵՆԻ ԿՐ ԴՄԱՅԱԿԱՆՆԵՐ ՍՈՒՆԵՅԱԻ ՄԵՇ ՊԱՇՏՕՆԱԿԻՑՆԵՐՈՒ ՀԵՏ ՀՈԳԵՒՐ ԽՈՐՀՐԳԾՈՒԹԵԱՆ ՇԱՐՔ ԱՆԹԻԼԻԱՍԻ ՄԷՋ Միացեալ Նահանգներու պաշտպանութեան նախարար Տոնայտ Ռամաֆելտ մամլոյ ասուլիսի մը ընթացքին յայտարարեց, որ Իրաք չի յարգեր ժընեի համաձայնագիրը, ըստ որուն՝ պատերազմական գերիները հրապարակաւ պէտք չէ «ցուցադրել»:

Ս. ՅԱԿՈՒԲ ԵԿԵՂԵՑԻ ԱՍՏՈՒԱԾԱՇՈՒՆՉԻ ՏԱՐԻ ԱՐԺ. Տ. ՄԵՍՐՈՊ ՔԷՆՅ. ՔԷՐՔԷՅԵԱՆ Սիւր՝ «ՅԱԿՈՒԲ ԱՌԱՔԵԱԼԻ ՆԱՄԱԿԸ» Չորեքշաբթի, 26 Մարտ 2003, ստուտուեան ժամը 9:30ին: ԹԱՐԱԿԱՆ ԽՈՐՀՈՐԴ Ս. ՅԱԿՈՒԲ ԵԿԵՂԵՑԻՈՅ

ԳԵՂԱՐՈՒԵՍԱԿԱՆ ԵՐԵԿՈՅ Կազմակերպութեամբ՝ ԳԱՍԶԳԱՅԻՆԻ ԼԻԲԱՆԱՆԻ ՇՐՋԱՆԱՅԻՆ ՎԱՐՉՈՒԹԵԱՆ Կատարողութեամբ՝ ՀԱՅՐԵՆԻ ՎԱՍՏԱԿԱՒՈՐ ԴԵՐԱՍԱՆՈՒԻ ԿԱՐԴՈՒԻՐ ՎԱՐԴԵՐԵՍԵԱՆԻ Մեծախոսութիւններ՝ համրայայտ ներկայացուցներ եւ ֆիլմեր Ասունը Երգիծական մանրապատումներ՝ թատերական կեանքը Տեղի կ'ունենայ Հիմնադրութիւն, 27 Մարտ 2003, երեկոյեան ժամը 8:30ին, Ճեմարանի «Վասպուրական» սրահին մէջ, Չորեք Էլ Պլաթ:

ԼՈՒՐԵՐ

Մեծի ՏԱՆԸ ԿԻԼԻԿԻՈՅ ԿԱԹՈՂԻԿՈՍՈՒԹԵՆԸ, ԱՆԹԻԼԻԱՍ

ԱՐԱՄ Ա. ԿԱԹՈՂԻԿՈՍ

«ԲԱԶՄԱԿՈՂՄԱՆԻՈՒԹԻՒՆԸ» ԿԸ ՆԿԱՏԷ ԱՇԽԱՐՀԻ ՆՈՐ ՀԱՄԱԿԱՐԳԻ ՀԻՄՔԸ

Վերջերս անդրին էլ ֆրանսերէն լեզուներով գրած իր յօդուածին մէջ, Ն. Ս. Օ. Տ. Ս. Արամ Ա. կաթողիկոս Մեծի Տանն Կիլիկիոյ յատուկ կարեւորութեամբ կը շեշտէ բազմակողմանիութիւնը (Multilateralism) իբրեւ հիմքը աշխարհի նոր համակարգին:


Անդրադառնալէ ետք 11 Սեպտեմբերի Նիւ Եորքի եւ Ուաշինկթընի ահաբեկչական արարքներուն, վեհափառ հայրապետը կ'ըսէ, թէ աշխարհի պատմութիւնը նոր ընթացք մը ստացաւ: Նորհրդային Միութեան փլուզումէն եւ երկրեւեռ աշխարհի փոփոխութենէն ետք, կը սպասուէր, որ աշխարհ ընթանար դէպի բազմաբեկեւորութիւն, բազմակողմանիութեամբ արտայայտուող: Սպասելի էր, որ այս մտածելակերպը ու գործելակերպը իր շօշափելի արտայայտութիւնը գտնէր շրջանային, տնտեսական ու քաղաքական կառույցներու եւ յատկապէս Միացեալ Ազգերու կազմակերպութեան ճամբով: Սակայն դժբախտաբար պատահեցաւ հակառակը: Իրաքի պատերազմը ցուցանելու մըն է այս կացութեան:

Ապա վեհափառ հայրապետը կարեւորութեամբ կ'ընդգծէ այն, թէ միակողմանի մօտեցումներ ու գործընթացներ՝ քաղաքական, տնտեսական թէ գիտնական ծիրէն ներս, աշխարհ կրնան առաջնորդել դէպի վտանգալից կացութիւններ: Նման գործընթաց մը կրնայ յառաջանել կրօններու եւ ազգերու միջեւ լարուածութիւն ու նոյնիսկ պատճառ դառնալ նոր ահաբեկչութեան: Միաբեկեւորողութեամբ կառավարուող աշխարհը միշտ պիտի մնայ վտանգներով լեցուն, եթէ ազգեր եւ պետութիւններ միասին մտածելու եւ գործելու ընթացքը չզարժընեն առանցքը աշխարհի նոր համակարգին: Այս մօտեցումով վեհափառ հայրապետը 7 կէտերու մէջ կը բացատրէ մէկ կողմէ վտանգը միակողմանի գործելակերպին (Unilateralism) եւ միւս կողմէ կը պարզէ բազմակողմանի գործելակերպին (Multilateralism) առաւելութիւնները: Յօդուածին վերջաւորութեան իբրեւ եզրակացութիւն Արամ Ա. կաթողիկոս կ'ընդգծէ ՄԱԿը աւելի զօրացնելու եւ անոր դերն ու հեղինակութիւնը աւելի շեշտելու հրամայական անհրաժեշտութիւնը:

Վեհափառ հայրապետին յօդուածը լոյս տեսած է Ֆրանսատառ եւ անգլիատառ զանազան թերթերու մէջ եւ երկու բնագրիներով: Կարելի է ամբողջութեամբ կարդալ կաթողիկոսարանի պաշտօնական կայքէջին վրայ՝ www.cathcil.org

ԼՈՒՍ

ԿԻՆԵՐՈՒ ԻՐԱՒՈՒՆԵՆԵՐՈՒՆ ԵՒ ՊԱՐՏԱԻՌՈՒԹԻՒՆՆԵՐՈՒՆ ՎԵՐԱԲԵՐՈՂ ՈՒՐՔԸՍՓ



Կիներու միջազգային օրուան առիթով, ԼՈՍ/Շրջանային վարչութեան ղափարակչական յանձնախումբի կազմակերպութեամբ, երէկ, 24 Մարտի առաւօտեան ժամը 10:00ին, ԼՈՍ/ի «Արաքսի Պուլ-դուրճեան» ընկերաբաժնի կենտրոնի «Թնճուկեան» սրահին մէջ տեղի ունեցաւ կիներու իրաւունքներուն եւ պարտաւորութիւններուն վերաբերեալ ուրբըջափ մը:

Չեռնարկին բացման խօսքը կատարեց Լիւսի Թօփալեան, որ նշեց, թէ կնոջ իրաւունքներու պահպանման ջանքերը ծնունդ առած է հին ժամանակներէն, եւ տարիներու ընթացքին կինը տիրացած է իր իրաւունքներուն մէկ մասին: Ան ըսաւ, թէ տակաւին կան կիներ, որոնք իրաւագրկուած են եւ կամ չեն գիտեր, թէ իրենք իրաւունքներ ունին: Ապա ան ծանօթացուց ուրբըջափը համակարգող Նորա Պայրազտարեան - Գապագեանը:

Միջազգային գետնի վրայ կնոջ իրաւունքներու ձեռքբերման համար գումարուած համագումարներուն եւ ժողովներուն տրուած որոշումները ներկայացնելով, Նորա Պայրազտարեան - Գապագեան ըսաւ, թէ այս բոլոր աշխատանքը կը տարուի, որովհետեւ բացարձակ իրողութիւն է, թէ ընկերութիւնը եւ մարդկային կեանքը բնականոն եւ յաջող ձեւով չի կրնար զարգանալ եւ բարգաւաճել, եթէ կինը իր դերը չկատարէ եւ չմասնակցի այդ գործընթացին:

Ապա ան անդրադարձաւ իբրեւնայի կնոջ իրաւունքներուն եւ այն որոշումներուն, որոնք տրուած են Լիբանանի պետութեան կողմէ եւ կը վերաբերին կնոջ իրաւունքներուն, այրերուն եւ անոնց միջեւ հասարակութեան, ընկերութեան մէջ իբրեւ անհատ գործերու, ղեկավարելու եւ այլն:


Նորա Պայրազտարեան - Գապագեան շեշտեց դրաւ այն իրողութեան վրայ, թէ անձ մը որպէսզի պաշտպանէ իր իրաւունքները՝ պէտք է նախ ճանչնայ իր իրաւունքները: Ան նշեց, թէ կինը ընկերութեան մէջ պէտք է գործէ իբրեւ ազատ ու պատասխանատու անհատ:

Ապա ներկաները բաժնուեցան գլխաւոր երեք խումբերու: Անոնց ցուցումները հարցաթերթիկ մը, որուն ընդմէջէն անոնք արտայայտեցին իրենց մօտեցումներն ու գաղափարները՝ կնոջ աշխատելու իրաւունքին, ամուսիններուն միջեւ հաւասարութեան, ազգային եւ ընկերային կեանքի մէջ կիներու ունեցած դերակատարութեան, տան, ընկերութեան եւ մարդկային զանազան մարզերու մէջ անոր ունեցած ներդրումին, իրաւունքներուն եւ պահանջներուն մասին:

Ուրբըջափի աւարտին, Նորա Պայրազտարեան - Գապագեան, արտայայտուած միտքերն ու կարծիքները համառոտելով ըսաւ, թէ կինը պէտք է գիտակցի իրենց իրաւունքներուն եւ զանոնք ներկայացրեն իբրեւ մարդկային իրաւանք հարց, որուն համար պէտք է աշխատանք տարուի թէ՛ կիններուն եւ թէ՛ այրերուն կողմէ: Ըստ անոր, կինը պէտք է դուրս գայ իր նեղ սահմաններէն, որպէսզի առիթը ունենայ նոր մարզեր նուաճելու եւ նոր իրագործումներ կատարելու: Ասկէ մեկնելով, ան ըսաւ, թէ պէտք է զօրաշարժի ենթակել կիները, որպէսզի ճեղքեն լուծեան պատը եւ բռնեն ինքնավստահութեան եւ ինքնավարութեան ուղին, լաւագոյն ձեւով ծառայելու համար ընտանիքին, ազգին եւ ընկերութեան:

ՔԱՆԻ ՄԸ ՏՈՂՈՎ

● ՓՈՒՎ ՎԱՐՉԱՊԵՏ Իսաւ Ֆարէս երէկ ընդունեց Լիբանանի մէջ Հայաստանի դեսպան Արեգ Յովհաննիսեանի, որուն հետ քննարկեց Պէյրութ - Երեւան երկկողմանի յարաբերութիւնները եւ պանոնք բարելաւելու հետանկարները: ● ՆՈՐ ՀՐԴԱՐԱՆԻ Նախագահ Նեպիի Պրըրի երէկ ընդունեց Լիբանանի մէջ Իտալիոյ դեսպան Ֆրանսո Միսթրօթեան, որուն հետ քննարկեց շրջանային պարագայներն ու Լիբանան - Իտալիա երկկողմանի յարաբերութիւնները: Պրըրի շնորհակատական հետագիր մը յղեց Չիլիի խորհրդարանի նախագահ Իպպի Լանտիի, իր ընտրութեան առիթով եւ շեշտեց երկկողմանի յարաբերութիւններու ամրապնդման անհրաժեշտութիւնը: ● ԱՐՏԱԿԻՆ գործոց նախարարութեան ընդհանուր քարտուղար Մոհամետ Իսա երէկ ընդունեց Լիբանանի մէջ Քուէյթի դեսպան Ալի Սլէյման Սայիտը, որուն հետ քննարկեց Իրաքի մէջ արձանագրուող պարագայներուն նկատմամբ Քուէյթի կեցուածքները: ● ՄԱՐՈՒՆԻՆԵՐՈՒ Նարայի Պուրթու Սֆէյր պատրիարքը երէկ ենթարկուեցաւ աչքի վիրաբուժութեան: ● ԿԵԳՐՈՆԱԿԱՆ ԴՐԱՄԱՍՈՒՆԸ երէկ Դրամատիկներու Միութեան ու լուսնայափոխներու սենտրալային յղեց արտաքին գործոց նախարարութեան շրջաբերականին պատճէնը, նկատել տալու համար, որ կան կեղծուած «եւրո»ներ՝ 50, 100 եւ 200:



Երէկ, տեղական մամուլը յուսարձակի տակ առած է իրաքեան պատերազմը, ամերիկեան յարձակումները եւ իրաքցիներուն ընդդիմութիւնը: Թերթերը նաեւ յուսարձակի տակ առած են պանապան պետութիւններու հակադէմոնստրացիոն յիշեալ դէպքերուն, ինչպէս նաեւ այս գծով լիբանանեան կեցուածքները: «Մաֆիր» գրած է, թէ ամերիկացիները կ'ընդունին իրենց կրած վնասները եւ կը պատրաստուին մտնելու հիւսիս, իսկ Պուշ կը պոչուցանէ Թուրքիան: Ուաշինկթըն պարտուած է եւ հարաւային Իրաքի մէջ դաշնակից ուժեր կը բախին իրաքեան բուռն դիմադրութեան:

Ըստ թերթին, Լիբանանի մէջ Ս. պատարագներ տեղի կ'ունենան խաղաղութեան համար, իսկ պանապան շրջաններու մէջ իբրեւ բողոքի արտայայտութիւն ամերիկեան արտարդութիւններ կը փճացուին: «Մաֆիր» գրած է, թէ նախագահ Պուշ յայտարարած է, որ կը գտնուիք մեծ ու դժուար պայքարի մը սկիզբը:

«Մուսթաքալ» գրած է, թէ Իրաք կը յայտարարէ, որ 25 ամերիկացիներ սպանուած են եւ կը ցուցարդէ գերիներու նկարներ, իսկ Ուաշինկթըն կը հաստատէ, որ ամերիկացի 12 պիւտրներ կորսուած են: Ըստ թերթին, ամերիկեան պատրաստութիւններ կը կատարուին՝ բռնկեցնելու համար հիւսիսային ճակատը: «Նահար» ի համաձայն, Իրաք կը դիմարդէ, իսկ Պաղտատի վրայ բուռն ուժաւորումներ կը շարունակուին: Նախիրայի մէջ ամերիկեան ուժերը կ'ընդունին վնասներ եւ տուին գերիներ, իսկ Փենթագոն կը խոստովանի, որ ամերիկեան երկու օդանւեր վար առնուած են: Ակարա եւ Ուաշինկթըն համաձայն են Իրաքի հարցով, սակայն Պուշ կը պոչուցանէ թուրքիան՝ Քիւրտիստան իջնելէ: Թերթը նշած է, թէ պատերազմին ահաւոր երեսը մուտք գործեց ամերիկացիներու տուններէն: «Անուար» ի համաձայն, Իրաք բուռն կերպով կը դիմարդէ եւ ամերիկեան պիւտրներու դիմադրութեան գերիներու պատկերներ կը ցուցարդէ: Ուաշինկթըն եւ Նախիրայի մէջ կատարի կոնիւնտր տեղի կ'ունենան եւ ամերիկացի զորավար ձու Ապի Չէյու կը խոստովանի, որ դժուար եւ կատարի կոնիւնտր օր մը դիմագրաւած են:

«Լիուս» գրած է, թէ Իրաքի մէջ ամերիկացիները անցուցին սեւ օր մը, 7 պահ եւ 5 գերի տալով եւ օդանւեր կորսնցնելով: Ամերիկեան վարչակարգը խուճապի մատուցեցաւ, միջազգային ընտանիքը ցնցուեցաւ, իսկ Պաղտատ խոստացաւ յարգել գերիներու վերաբերեալ ժրմելի համաձայնագիրը: Իտալիոյ մէջ հապարտութեամբ մարդիկ ցոյց մը կատարեցին ամերիկեան պիւտրական կեղծութեան դէմ, նշած է թերթը:

Ըստ թերթին, ամերիկեան ուժերը պիտի պարպել թուրքիա - Իրաք սահմանին վրայ գտնուող իրենց դիրքերը: «Քիֆիա Արապի» գրած է, թէ պատերազմին 4րդ օրը Ամերիկա կը կորսնցնէ հոգեբանական պատերազմը: Նախիրայի մէջ 25 ամերիկացիներ սպանուեցան եւ 5 ուրիշներ գերի ընտուցուեցան, նշած է թերթը: Ըստ անոր, Ուաշինկթըն դժուարութեամբ կոնի կը մղէ եւ Մոսկուան կ'ամբաստանէ Պաղտատի օժանդակելու յանձնարքով:

Թերթին համաձայն, Յորդանան առաջին արաբական երկիրն է, որ համաձայն գտնուելով Ուաշինկթընի պահանջին՝ կը վտարէ իրաքցի 5 դիմադրողներ: «Պայրաք» օրաթերթը գրած է, թէ իրաքեան դիմադրութիւնը մագլցում կ'արձանագրէ, մինչ դաշնակից ուժերը կը մտնեն Պաղտատի: Ամերիկեան եւ բրիտանական ուժերը տուին պահեր, եւ անոնցմէ քանի մը հոգի գերի բռնուցանուցան:

Ըստ թերթին, ժամանակը սկսաւ գործել Ուաշինկթընի կամքին հակառակ ուղղութեամբ, իսկ շարքերը կը դատապարտուին միջազգային ընտանիքին կողմէ: Նախագահ Լահուտ կը յայտարարէ, որ Իրաքի դէմ քանդիչ պատերազմը կը հակառակ մարդկային իրաւունքներուն ու միջազգային օրէնքներուն, գրած է օրաթերթը:

Ըստ անոր, հակառակ բոլոր տարածայնութիւններուն, Սաատա Հիւսէյն ողջ ու առողջ վիճակի մէջ պատկերասփռուեցաւ: Այլ լուրերու կարգին, թերթը գրած է, թէ Հարիրի կը սկսի եւրոպական շրջապտոյտի մը, որ կ'ընդգրկէ հինգ երկիրներ:

ՎԵՀԱՓԱՌ ՀԱՅՐԱՊԵՏԸ Ս. ՔԱՌԱՍՆԻՅ ՄԱՆԿԱՆՅ ԵԿԵՂԵՑԻՈՅ ՄԵՉ ՄԻՋԻՆՔԻ ԱՌԻԹՈՎ

Լիբանանի թեմի տարիներու աւանդութիւնն է, որ Մեծ Պաշէի ու յատկապէս Միջինքի առիթով, Մեծի Տանն Կիլիկիոյ վեհափառ հայրապետը Ս. Նշան Մայր Եկեղեցւոյ մէջ հանդիսանալով Արեւազալի արարողութեան եւ իր հայրապետական յորդորն ու պատգամը տայ մեր սիրելի ժողովուրդին: Այս տարի, նկատի ունենալով Ս. Նշան Մայր Եկեղեցւոյ մէջ կատարուող նորոգութեանը աշխատանքները, հովուապետ եւ ժողովուրդի գեղեցիկ կապը պահելու նախաձեռնութեամբ, Լիբանանի Հայոց թեմի առաջնորդ Գեղամ եպ. Նաչբեանի հրահրելով, վեհափառ հայրապետը՝

Ն. Ս. Օ. Տ. Ս. ԱՐԱՄ Ա. ԿԱԹՈՂԻԿՈՍ ՄԵԾԻ ՏԱՆԸ ԿԻԼԻԿԻՈՅ

յառաջիկայ Զորքըջաբթի, 26 Մարտ 2003ին, Ս. Քառասնից Մանկանց Եկեղեցւոյ մէջ պիտի նախագահէ՝ Արեւազալի հանդիսաւոր արարողութեան եւ ապա պիտի տայ իր հայրապետական պատգամը: Օրուան երգեցողութիւնը պիտի կատարեն Դպրեվանքի սարկաւազ եւ ժառանգաւոր սաները:

Table with 2 columns: Event/Action and Time. Row 1: Առաւօտեան ժամերգութիւն - ժամը 8:00ին. Row 2: Արեւազալ - ժամը 9:00ին. Row 3: Քարոզ - ժամը 9:30ին.

Կոչ կ'ուղղենք հաւատացեալ մեր ժողովուրդին՝ ներկայ ըլլալու Արեւազալի հոգեթիով պարտողութեան եւ լսելու վեհափառ հայրապետին արարողութեան:

ԳԻՒՆ ԱԶԳ. ԱՌԱՋՆՈՐԳԱՐԱՆԻ

ԱՆԹԻԼԻԱՍ ԿԸ ՇԱՐՈՒՆԱԿԷ ՀԵՏԵՒԻԼ ԻՐԱՔԻ ԺՈՂՈՎՈՒՐԴԻՆ ՄԱՐԴԱՍԻՐԱԿԱՆ ԱՇԽԱՏԱՆՔԻՆ

Մեծի Տանն Կիլիկիոյ կաթողիկոսութիւնը կը շարունակէ մօտէն հետեւի Իրաքի պատերազմի պատճառով շրջանի մէջ ստեղծուած կացութեան եւ յատկապէս շրջանի հայ գաղութներու վիճակին:

1.- Շաբաթ, 22 Մարտին, Ն. Ս. Օ. Տ. Ս. Արամ Ա. կաթողիկոս հեռաձայնային երկար գրոյց մը ունեցաւ Պաղտատ, Ազգային առաջնորդարանի անդամ Պարոյր Յակոբեանի հետ եւ մօտէն տեղեակ դարձաւ Պաղտատի հայութեան մասին: Փառք Աստուծոյ, հակառակ գիշեր մը առաջ տեղի ունեցած ահաւոր ուժեղ քանդումներուն, հայ համայնքը ոչ մէկ մարդկային կամ ֆիզիքական վնասի ենթարկուած է: Վեհափառ հայրապետը թելադրութիւններ եւ ուղղորդումներ տուաւ ատենադպիրին, որ անհրաժեշտութեան պարագային, մարդասիրական օգնութեան համար դիմեն միջեկեղեցական օժանդակութեանը գրասենեակները: Վեհափառ հայրապետը անհրաժեշտ կարգադրութիւններ կատարած էր նախապէս այս գծով:

2.- Վեհափառ հայրապետը նաեւ կապի մէջ եղաւ Քուէյթի եւ Շոքի երկիրներու թեմի կաթողիկոսական փոխանորդ Կորին Սքեզանին հետ: Պատերազմի առաջին օրերուն գաղութը վախի մէջ եղած է, սակայն արդէն իսկ վախը լայն չափով վերացած է: Կրթական նախարարութեան հրահանգով դպրոցները շարքով մը փակուած են, ներառեալ՝ Քուէյթի Ազգային վարժարանը: Առաջնորդարանն ու ազգային կառույցները բնականոն կը գործեն:

3.- Վեհափառ հայրապետը նաեւ մնայուն կապի մէջ է Իրանի եւ Սուրիոյ մեր առաջնորդ սրբազաններուն հետ: Անոնք պատրաստ վիճակի մէջ են իրենց աջակցութիւնը ընծայելու յիշեալ երկիրներէն հայ գաղութականներ գալու պարագային:

4.- Միջեկեղեցական մարդասիրական օգնութեան գծով վեհափառ հայրապետը կը շարունակէ իր խորհրդակցութիւնները պատասխանատուներուն հետ: Ան Շաբաթ առաւօտ հեռաձայնային խորհրդակցութիւն մը ունեցաւ Միջին Արեւելքի Եկեղեցիներու Խորհուրդի ղեկավար քարտուղար ղոկտ. Ռիատ Ժարժուրին հետ:

ՄԻԱՅԵԱԼ ՅԱՅՏԱՐԱՐՈՒԹԻՒՆ ՄԻՋԻՆ ԱՐԵՒԵԼՔԻ ՀՈԳԵՒՈՐ ՊԵՏԵՐՈՒ ԿՈՂՄԷ

Ն. Ս. Օ. Տ. Ս. Արամ Ա. կաթողիկոսի առաջարկին ընդառաջելով, Միջին Արեւելքի հոգեւոր պետերը միացեալ յայտարարութիւն մը կատարեցին, Ուրբաթ, 21 Մարտ 2003ին, Իրաքի դէմ շղթայազերծուած պատերազմին մասին, որուն ամփոփումը կու տանք ստորեւ:

Ցաւով կը հաստատենք, որ աշխարհի կրօններու եւ քաղաքական դեկալարներու խաղաղութեան բոլոր կոչները ի դերն ելան: Միաժամանակ այսօր մենք կը գտնուինք պատերազմի մը սկսբնաւորութեան, որուն հետեւանքները ծանր պիտի կշռեն ոչ միայն Իրաքի ժողովուրդին, այլեւ ամբողջ Միջին Արեւելքին վրայ, ինչպէս նաեւ միջազգային կապակերպութիւններուն:

Բոլոր եկեղեցիները «ոչ» ըսին այս պատերազմին, ուր կ'ոտնակոխուին սկսբնաւորութեան արարողութեան: Պատերազմ մը, որ կրօններու, մշակութիւններու վրայ իր տխուր ազդեցութիւնը պիտի ունենայ, ուժի իրաւունքին հաւատացող կառավարութեան մը որոշումը ըլլալով:

1.- Հովուական մեր պատասխանատուութենէն մեկնելով, մենք պիտի շարունակենք մեր առաքելութիւնը միջազգային ու շրջանային գետնի վրայ, որպէսզի քանդիչ պատերազմը վերջնականապէս դադրի:

2.- Կոչ կ'ուղղենք պետութիւններուն ու մարդասիրական միջազգային կապակերպութիւններուն, որպէսզի օգնութեան հասնին պատերազմին վնասուողներուն:

3.- Կը թելադրենք Միջին Արեւելքի Եկեղեցիներու Խորհուրդին, որ պատրաստ վիճակի մէջ ըլլալ շարունակելու իր մարդասիրական օգնութիւնը, աւելիով օգտակար ըլլալու պատերազմի մէջ գտնուող ժողովուրդին:

4.- Կոչ կ'ուղղենք մեր եկեղեցիներուն ու ժողովուրդներուն՝ ըլլալու միասնական, դիմագրաւելու համար արտաքին բոլոր ազդեցութիւնները, որոնք կը նպատակադրեն քանդել մեր միասնականութիւնը:

5.- Կը հրահրենք մեր ժողովուրդները ու թոյր խաղաղութիւն սիրողները, որպէսզի շարունակեն իրենց աղօթքները ամբողջական խաղաղութեան համար, Իրաքի, Միջին Արեւելքի եւ ամբողջ աշխարհին մէջ:

ՀԱՅ ԴԱՏ

ՀԱՅ ԴԱՏ

ՔՈՆԿՐԵՍԻՆ ՄԷՉ ՀԱՅԿԱԿԱՆ ՑԵՂԱՍՊԱՆՈՒԹԵԱՆ ՄԱՍԻՆ ՊԻ. ՊԻ. ՍԻ.Ի ԺԱՊԱԵՆԻ ՑՈՒՑԱԴՐՈՒՄ

Միացեալ Նահանգներու Հայ Դատի յանձնախումբը վերջերս հաղորդեց, թէ Քոնկրեսի սրահներէն մէկուն մէջ ցուցադրուած է Հայկական Ցեղասպանութեան մասին «Պի. Պի. Սի.»-ի կողմէ պատրաստուած «Արմինիա. Տը Պիթրէյտ» խորագիրով վաւերագրական ժապաւենը, որ յատկապէս կ'անդրադառնայ Միացեալ Նահանգներու մէջ թրքական կառավարութեան թափած ուրացման հիգիւրդը:

ՀԱՅԿԱԿԱՆ ՑԵՂԱՍՊԱՆՈՒԹԵԱՆ ԹԵՄԱՅՈՎ ԹԱՏԵՐԱՆԱԿ ՀՈՒՎՈՒՄԻ ՄԷՉ

Օրերս, առաջին անգամ ըլլալով, Հոլիվուտի մէջ կը ներկայացուի Հայկական Ցեղասպանութեան մասին Լիլի Թոմասեանի «Թող ժայռերը խօսին» ("Let the rocks speak") թատերախաղը:

Անի Խանգալտեանի ղեկավարութեամբ թատերախաղը կը ներկայացնէ Հայկական Ցեղասպանութեան վերապրած ընտանիքի մը կեանքը: Եղեռնէն ճողոպրած հայրը եւ իր երկու դուստրերը 1925ին Ամերիկա հաստատուած են, իսկ մայրը, փոքր աղան եւ ընտանիքին մնացած անդամները Հայկական Ցեղասպանութեան զոհ գացած են:

Թատերախաղի ընթացքին ընտանիքին փոքր աղջիկը՝ Գայիանէն կը տօնէ իր ծննդեան 16րդ տարեդարձը: Ան 1915ին վեց տարեկան ըլլալով՝ շատ բան չի յիշեր պատահած ողբերգութեան մասին: Սակայն չի կրնար մոռնալ, որովհետեւ երեք ուրուականներ եւ մահ մարմնաւորող երեսայ մը կը խանգարեն իր հանգիստը՝ մտնելով իր յարկաբաժինէն ներս եւ փրկուելով Եղեռնի տխուր պատմութիւնը:

Այս տիպարներուն կեանքը կը ղեկավարուի թաքուն յիշատակներով, ատելութեամբ եւ բարկութեամբ: Զանգեան տեսարաններուն մէջ անոնք կը ներկայացնեն իրենց կրօն տառապանքները թուրքերու կողմէ: Թատերախաղի աւարտին թոմասեան իր հերոսները կը մղէ, որ արդարութիւն պահանջեն:

«Լոս Անճելըս Թայմ»-ը «Թող ժայռերը խօսին» թատերախաղին անդրադարձած է իր Մարտ 14ի թիւով՝ կեդրոնանալով Հայկական Ցեղասպանութեան հարցին վրայ եւ յայտնելով, թէ Լիլի Թոմասեան այս թատերախաղով կ'ուզէ հանրութիւնը տեղեկ պահել հայութեան զէմ գործունեւ մեծ ոճիւրին մասին:

Թերթը յիշած է, թէ թոմասեան ներշնչուած է վե՞րապրող մը, որուն յիշողութիւնները ձայնագրուած էին Կլեմէնտ Զոպիանի «Ցեղասպանութեան ծրագիր»-ին կողմէ, ինչպէս նաեւ՝ վաւերագրական այլ նիւթերէ, որոնք 1999ին ներկայացուած են «Լոս Անճելըս Թայմ»-ի մէջ:

«Յաւալի է վայրագութեան ծանօթանալը, սակայն աշխարհի գիտակից քաղաքացիները պէտք է դիտեն այս թատերախաղը», ըսած է «Լոս Անճելըս Թայմ»-ի թղթակիցը:

«ԹԵՐՔԻՆ ԵՒ ՀԱՅԿԱԿԱՆ ԿԸ ՀՐԱՊԱՐԱԿԷ ԵՒՐՈՊԱԿԱՆ ԽՈՐՀՐԳԱՐԱՆԸ ՔՆՆԱԳԻՏՈՂ ՄԻՒԼԻ ՄԵՃԼԻՍԻ ՅԱՅՏԱՐԱՐՈՒԹԻՒՆԸ

Անցեալ տարի, Փետրուար 28ին, Եւրոպական խորհրդարանը որդեգրած էր Եւրոպական Միութիւն - Հարաւարական կողմի կապերու մասին տեղեկագիր մը, զոր պատրաստած էր շուէտացի պատգամաւոր Փեր Քարտոնը: Այս տեղեկագիրին որդեգրմամբ Եւրոպական խորհրդարանը վերահաստատած էր Հայկական Ցեղասպանութեան ճանաչման իր պահանջը թուրքիայէն:

Քարտոնի տեղեկագիրին Հայկական Ցեղասպանութեան եւ Հայաստանի շրջափակումին վերաբերող բաժինին մէջ կը նշուէր. «Եւրոպական խորհրդարանը կողմ կ'ուզէ թուրքիոյ իր եւրոպական ձգտումներուն համապատասխան պատշաճ քայլեր առնել, յատկապէս՝ Հայաստանի դէմ իր հաստատած շրջափակումը շնջելու առումով: Այս ուղղութեամբ կը վերահաստատէ 1915ին հայերու դէմ գործարկուած ցեղասպանութիւնը ճանչցող 18 Յունիս 1987ի բանաձեւով արտայայտուող իր կեցուածքը եւ կողմ կ'ուզէ թուրքիոյ՝ հաշտութեան հիմքեր ստեղծելուն»:

Եւրոպական խորհրդարանի այս քայլէն ետք թուրքիոյ խորհրդարանի՝ Միլլի Մեճլիսի օրուան քաղաքական վեց գլխաւոր ուժերը միացեալ յայտարարութեամբ մը դատապարտած էին Եւրոպական խորհրդարանի որոշումը՝ յիշելով նկատելով «Եւրոպական Միութեան թուրքիոյ անդամակցութեան դէմ կեղտոտ յարձակում»: Թրքական անգլիատառ «Թըրքի Տէյլի Նիուզ» թերթը Մարտ 3ին հրատարակած է թուրքիոյ Միլլի Մեճլիսին մէջ ներկայացուած քաղաքական բոլոր կուսակցութիւններու միացեալ այդ յայտարարութիւնը, որ կը դատապարտէր Եւրոպական խորհրդարանի որոշումը Հայկական Ցեղասպանութեան վերաբերեալ: Ելոյթ ունենալով նիստին ընթացքին՝ խորհրդարանի փոխ նախագահ Եւրոյէլ Եալովա կարդացած է միացեալ յայտարարութիւնը, որուն մէջ նշուած է.

ԵՒՐՈՊԱՅԻ ՀԱՅ ԴԱՏԻ ՅԱՆՁՆԱԽՈՒՄԸ Կ'ՈՂՉՈՒՆԷ ԼԱ ՀԷՅԻ ՄԷՉ ՆՈՐ ԱՏԵԱՆԻՆ ՀԱՍՏԱՏՈՒՄԸ

Եւրոպայի Հայ Դատի Յանձնախումբը վերջերս ողջունեց Լա Հէյի մէջ Միջազգային Ոճրագատ Ատեանի հաստատումը եւ անոր 18 դատաւորներու նշանակումը:

Այս նոր ատեանը պիտի զբաղի ցեղասպանութեան, պատերազմի եւ մարդկութեան դէմ ոճիր գործած անձերու դատաւարութեամբ, ըլլան անոնք քաղաքացիներ կամ զինուորականներ: «Այս նոր ատեանը կարելի էր քայլ մըն է մարդկութեան պատմութեան մէջ եւ արդիւնքն է մարդկային իրաւանց բազմաթիւ պաշտպաններու ջանքերուն: Անիկա կարելի էր «պատ» մըն է բոլոր անոնց դիմաց, որոնք նուազագոյն մտադրութեամբ կ'ուռնան մարդոց ոչնչացման ծրագիրներ մշակելու եւ իրագործելու», յայտնեց Հ. Յ. Դ. Եւրոպայի Հայ Դատի Յանձնախումբի ատենապետուհի Հիլտա Չոպույեան:

Ան դիտել տուաւ, որ դժբախտաբար որոշ երկիրներ, որոնց շարքին թուրքիա եւ Միացեալ Նահանգներ, հարցեր ստեղծեցին այս նոր ատեանի հաստատման ընթացքին: Չոպույեան ընդգծեց, որ այն երկիրները, որոնք ենթադրաբար նուիրուած են մարդկային իրաւանց պաշտպանութեանը, պաշտպանութեանը կ'արժանանան անհիմն պարտաւորութեանը: Այսպէս անոնք պիտի պատասխանեն Հոռոյի Ուլտար, որուն հիման վրայ ստեղծուած է ան:

«Մենք նաեւ յուսախաբ ենք, որ ատեանին տակաւին չէ տրուած յետադարձ ուժ՝ անցեալին պատահած ոճիրները դատելու, յատկապէս դատելու անցեալի ոճիրներու ժառանգորդ պետութիւնները: Միջազգային փորձագէտներ շատոնց կ'ընդգծեն Հայկական եւ Քամպուտիոյ ցեղասպանութիւնները դատելու կոչուած ատեանի մը գոյութեան անհրաժեշտութիւնը, մասնաւորապէս այդ ցեղասպանութիւնները ծառայեցին նոր ոճիրներու քաջաբերման: Հետեւաբար, այսօր մի-

հանգէ պէտք էր Եւրոպական խորհրդարանի անարդար վերաբերմունքի առաջին արտայայտութիւնը չէ: Աւելին. նման որոշման ընդունումը ուղղակի Եւրոպական համագումարի բացման օրը (ուր թուրք խորհրդարանականներու մասնակցութեամբ պիտի էր քննարկուէր Եւրոպական Միութեան ապագան) յատկապէս կ'ուրուագէ՞ այն մտադրութիւնը, որ անընդունելի է: Եթէ այս ամօթալի քայլը թուրքիոյ դէմ կատարուած է այն յոյսով, որ թուրքիա կը հրաժարի Եւրոպական Միութեան անդամակցելու իր մտադրութեան, ապա մեր պարտականութիւնը կը նկատենք յայտարարել, թէ Հարաւար կը սխալի: Թուրքիա մեծ ջանքեր ի գործ դրած է եւ զոհողութիւններ կատարած է իր բոլոր կառույցներուն եւ յատկապէս խորհրդարանին մէջ, որպէսզի Եւրոպական Միութեան լիիրաւ անդամ դառնայ: Պատմութիւնը կարելի չէ նենգափոխել քմահաճ որոշումներով: Աւելի քան քառասուն տարի է ի վեր, սկսեալ Պաղ պատերազմի օրերէն, թուրքիա հսկայական ճիգ կը թափէ միացեալ պաշտպանութեան ծիրէն ներս՝ պաշտպանելու ազատութիւնը ու տարածքային ամբողջականութիւնը այն երկիրներուն, որոնք այսօր այս անարդար որոշումը որդեգրեցին մեր դէմ: Բայց միեւնոյնն է, որոշումը պիտի չօգնէ անոնց: Յուսանք, որ օր մը արխիւները կը բացուին պատմաբաններուն առջեւ, եւ անոնք այնպիսի փաստեր կը յայտնեն, որ ամօթանքի սիւնին կը դառնան այս որոշումը ընդունողները: Եւրոպական խորհրդարանի այս քմահաճ որոշման թուրքիոյ Միլլի Մեճլիսի պատասխանը պիտի ըլլայ պատմական փաստերու հրատարակումը: Իսկ այդ փաստերը մեր օգտին են»:

Այս յայտարարութիւնը, ըստ «Թըրքի Տէյլի Նիուզ»-ի, յստակապ ծափահարութիւններով ընդունուած է խորհրդարանականներուն կողմէ: Եալովա նաեւ ժխտած է Եւրոպական խորհրդարանի այն հաստատումը, թէ՛ «Հանրապետական թուրքիոյ հիմնադիր Մուսթաֆա Գեմալ Աթաթուրք ինք ընդունած է Հայկական Ցեղասպանութիւնը՝ խորհրդարանի 1921 Ապրիլ 10ի նիստին իր ելոյթին ընթացքին»: Եալովա նշած է, թէ խորհրդարանը նիստ գումարած է Ապրիլ 8ին եւ 11ին այդպիսի ելոյթ մը տեղի չէ ունեցած: Ըստ Եալովայի, Ապրիլ 10ին խորհրդարանը նիստ չէ գումարած:

ԲՐԻՏԱՆԻՈՅ ՄԷՉ ԼԵՌՆԱՅԻՆ ՂԱՐԱԲԱՂԻ ՏԱԳՆԱՊԻՆ ՄԱՍԻՆ ԶՐՈՅՑ

Ազրպէյճանական «Պաքու Թուտէյ» թերթը կը հարդրէ, թէ Բրիտանիոյ ազրպէյճանական ոչ կառավարական կազմակերպութիւնը «Ուսթան» եւ Եւրասիական Միջազգային լարդաւաճման կազմակերպութիւնը Մարտ 17ին Անգլիոյ Լորտերու պալատին մէջ կատարած են «Յատուկ նախաձեռնութիւններու շարք»-ի մը բացումը՝ Լեռնային Ղարաբաղի տագնապին մասին հրատարակային զրոյցով մը:

Թերթին համաձայն, զրոյցին ընթացքին խօսք առած է Հարվըրտ համալսարանի կասպեան հարցերու մասնագէտ դոկտ. Պրենտա Շեֆըր, որ խօսած է Լեռնային Ղարաբաղի տագնապին վերաբերող տարբեր հարցերու մասին: Ազրպէյճանի կեցուածքներով հանրածանօթ դոկտ. Շեֆըր չեչտած է Ազրպէյճանի համար Շուշիի կարեւորութիւնը: Ան դիտել տուած է, թէ ազրպէյճանը պէտք է աւելի մեծ դերակատարութիւն ունենան Լեռնային Ղարաբաղի տագնապին շուրջ բանակցութիւններուն մէջ: Շեֆըր նշած է, որ ազրպէյճանը պէտք է իրենք զիրենք խաբեն ուղղակի լուծումի մը ակնկալած ծախսերուն վերաբերեալ եւ ակնկալած, թէ միաժամանակ հայերը պէտք է թերագնահատեն ազրպէյճանի ուժը:

Թերթը կը գրէ, թէ զրոյցին ընթացքին խօսք առած է նաեւ պատմագէտ եւ լրագրող Տէյվիտ Պարչըրտ, որ անդրադարձած է Լեռնային Ղարաբաղի տագնապի հոլովոյթին՝ զայն գետեղելով իսլամները Եւրոպայէն դուրս քշելու դարձուրտ արշաւի մը պարունակին մէջ: Ան նաեւ խօսած է Ազրպէյճանի զաղթականներու իր այցելութիւններուն մասին՝ ցաւ յայտնելով զաղթականներու «չարչարաններուն» համար:

Ըստ ազրպէյճանական թերթին, զրոյցի աւարտին հարցումներու ընդմէջէն արծարծուած են նաեւ խոշոր զինուորականներու, գաղթականներու, միջազգային համայնքի դերակատարութեան, «բռնագրաւուած» շրջաններուն մէջ գտնուող ազրպէյճանական «պատմական» եւ կրօնական «հնալայրեր» վիճակին, հայ զաղթականներու Ազրպէյճան վերադարձին, տագնապին օրինակային երեսներուն եւ խաղաղ լուծումի մը հաւանականութեան վերաբերող հարցեր:

ՔՈՆԿՐԵՍԱԿԱՆՆԵՐ ԿԸ ՇՆՈՐՀԱՒՈՐԵՆ ԼԵՌՆԱՅԻՆ ՂԱՐԱԲԱՂԸ

Քոնկրեսականներ Փեթրիք Կենետի, Տեյից Նուկես եւ Ֆրանք Փայոն Արցախի ազատագրական պայքարի 15ամեակին առիթով վերջերս Ներկայացուցիչներու Տան Գիստին ընթացքին շնորհաւորած են Լեռնային Ղարաբաղի ժողովուրդը: Քոնկրեսականները իրենց յայտարարութիւններուն մէջ գորկաբերին յայտնած են Լեռնային Ղարաբաղի անկախութեան:

«Լեռնային Ղարաբաղի ազատագրական պայքարի 15ամեակին առիթով կը շնորհաւորեմ Լեռնային Ղարաբաղի ժողովուրդը ժողովրդավարական ազատ եւ բաց ընկերութիւն մը կերտելու իր վճռականութեան համար», յայտնած է Փայոն: Քոնկրեսական Կենետի իր կարգին յայտնած է, թէ «հակառակ տարիներու ընթացքին տեղի ունեցած ցեղային մաքրագործումներուն, սեռական կաշտակարար խտրականութեան, պետութեան կողմէ վայրագութեան եւ սպառնալիքներուն, Լեռնային Ղարաբաղի ժողովուրդը բնաւ չէ շեղած անկախութեան իր պայքարէն՝ յուսալով, որ Քոնկրեսը կը շարունակէ ցեղակազմակերպ Լեռնային Ղարաբաղի ժողովուրդին»: Իսկ քոնկրեսական Նուկես իր կարգին ընդգծած է, որ Լեռնային Ղարաբաղ մեծ ներդրում ունի Հարաւարի Կոփկասի կայունութեան եւ խաղաղութեան մէջ:

Աւելի կանուխ, Փետրուարին Քոնկրեսի Հայկական հարցերու խմբակցութեան երկու անդամներն են Ֆրանք Փայոն եւ շնորհաւորած էին Լեռնային Ղարաբաղի ժողովուրդը՝ արցախեան պայքարի 15ամեակին առիթով: Իրեն պատասխան քոնկրեսականներու նախաձեռնութեան Լեռնային Ղարաբաղի Հանրապետութեան Ազգային ժողովի նախագահ Օլէկ Եսայեան ցամաքով մը շնորհակալութիւն յայտնեց քոնկրեսականներուն: «Ձեր շինչը եւ ազնիւ յայտարարութիւնները շատ գնահատելի են այն շրջանին, երբ մենք կ'ոգնակոչեմք անկախութեան եւ վերածնունդի ոգին», գրած էր Եսայեան ցամաքով մէջ:

Founded in 1955 Haigazian University is currently accepting applications For Year 2003 - 2004 to the Faculty of Arts and Sciences Faculty of Social and Behavioural Sciences Faculty of Business Administration & Economics For further information contact: Haigazian University, Mexique St. Kantari Tel./Fax: 01-349230/1, 01-353010/1/2 E-mail: admissions@haigazian.edu.lb www.haigazian.edu.lb

ՀԱՄԱՉՈՒՄՅԻՆ «ՈՒՒԲԵՆ ԶԱՐԳԱՐԵԱՆ» ՄԱՍՆԱՃԻՂ ՀԱՄԱՉՈՒՄՅԻՆ «Ո. ԶԱՐԳԱՐԵԱՆ» ԶԱՐԹՈՒՄԱՆ ՅԱՅՏԱԳԻՐ Ա. CINE CLUBի յանձնախումբը կազմակերպած է «SHINE» ՖԻԼՄԻ ԳՈՒՑԱԴՐՈՒԹԻՒՆԸ ԲԵՆԻՍԻՍՈՒՄՍԻՍ SCOTT HICKS Գլխաւոր դերասան՝ GEOFFREY RUSH Գործընթացը, 26 Մարտ 2003, Երեկոյեան ժամը 8:00ին: Բ. Մասնաճիւղի վարչութեան կազմակերպութեամբ ՄԱՆԿԱՊԱՏԱՆԵԿԱՆ ԵՐԱՇՇՏԱԿԱՆ ԶԵՆՆԱՐԿ Զաբաթ, 29 Մարտ 2003, Երեկոյեան ժամը 7:00ին: ԵԱՆՕԹ. ԶԵՆՆԱՐԿՆԵՐ ԵՂԻ ԿՈՒՆԵԱՆ «ԱՋԱՏԱՄԱՐՍ ԱՎՈՒՄԻ» «ՉՈՒՄԱՍՏՐԵԱՆ» ՍՐԱՇԻՆ ՄԷՉ ՍՈՒՏԵՐ ԱՋԱՏ ԿԱՐՉՈՒԹԻՒՆ

«ԱՉԳԱԿ»Ի ՀԵՌԱՉԱՅՆԻ ԹԻՒՒԵՐԸ «ԱՉԳԱԿ»-ի հետ կապուելու համար հեռաձայնել հեռուեալ թիւերուն. -258526, 260115 եւ 241274:

ԱՌՈՂՋԱՊԱՇԱԿԱՆ

ԱՇԽԱՐՀ ԴԱՏՐԱՍՏ ԶԷ ՄԱՆՐԷՆԵՐՈՒ ՅԱՐԶԱԿՈՒՄԻ ՄԸ

Աշխարհ շատ աւելի լուրջ քայլերու պէտք է դիմէ մարդիկ պաշտպանելու համար մանրէններէ, նման անոր, որ վերջերս թոքատապի մահացու պարագաներ պատճառած է, ինչպէս նաեւ՝ աւելի աւանդական թշնամիներ, ինչպէս՝ կրիփ եւ թոքախտ, յայտնած են մասնագէտներ անցեալ շաբաթ:



Ամերիկեան բժշկագիտութեան հիմնարկին մէկ խմբակը անցեալ շաբաթ մանրէներու եւ ժահրերու սպառնալիքին մասին տեղեկագիր մը հրատարակած է: Խմբակը գլխաւորած տոքթ. Մարկըթ Համպըրը մամուլի ասուլիսի մը ընթացքին յայտնած է, թէ Միացեալ Նահանգներ եւ աշխարհ տակաւին բաւարար քայլերու չեն դիմած պաշտպանութեան համար մանրէներէ:

Կրիփի ընդհանրական համաճարակ մը կրնայ հարիւր հազարաւոր մարդիկ սպաննել եւ տնտեսութիւններ քանդել, սակայն գոյութիւն չունի լաւ դրութիւն մը՝ նոյնիսկ հետապնդելու նման համաճարակ մը, ո՛չ թէ սանձելու գայն:

Օրինակներէն մէկը թոքատապի տեսակ մըն է, որ վերջերս առնուազն 10 զոհ իւլած է, ըսած է տոքթ. Զէյմա Հիլուզ, որ ամերիկեան Հիւանդութեան Կանխարգիւման եւ Հսկողութեան կեդրոններու (Մի. Տի. Մի.) վարակիչ հիւանդութիւններու բաժանմունքին տնօրէնն է:

Խմբակը առաջարկած է, որ Մ. Նահանգներ այլ կառավարութիւններու եւ Առողջապահութեան Համաշխարհային կազմակերպութեան հետ աշխատին նոր վարակումներ նկատելու եւ արագօրէն ձեռնարկելու անոնցմէ:

Ասիական շնչանակէտի տաճանաչումի աւելի լաւ քննութիւններու, յաւելեալ եւ աւելի լաւ պատուաստներու եւ նոր դեղերու մշակումը, ինչպէս նաեւ աւելի իմաստուն ձեռնարկ գործածութիւնը՝ արդէն իսկ գոյութիւն ունեցող դեղերու:

«ԳԵՐՍԱՆՐԷՆԵՐՈՒ» ԳԵՄ ՊԱՅՔԱՐ

Անթիպիոթիքներու սխալ ձեռնարկ գործածութիւնը կը նշանակէ, թէ բազմաթիւ մանրէներ անոնց դէմ դիմադրողականութիւն մշակած են:

Խմբակը կոչ ուղղած է անմիջապէս արգիւելու ազարակներու անստուաններու համար անթիպիոթիքներու գործածութիւնը, եթէ անոնք նաեւ մարդոց համար կը գործածուին:

Համպըրը ըսած է, որ ուսումնասիրութիւններ յետազոտէն ցոյց տուած են, թէ անթիպիոթիքներու գործածութիւնը՝ ազարակներու անստուաններու աճը քաջալերելու համար, կ'օժանդակէ մանրէներու այլասեբուցումին, այնպիսի ձեռնարկ, որ անոնք դեղերու դէմ պաշտպանութեան միջոցներ կ'ապահովեն:

ԽՈՐՀՐԳԱՒՈՐ ԹՈՔԱՍՊԱՆՐԵՆՆԵՐ ԵՆԻՆՏԵՐ ԵՆԻՆՏԵՐ ԵՆԻՆՏԵՐ

Առողջապահութեան մարդիկ պաշտօնատարներ անցեալ շաբաթավերջին կը յայտնէին, թէ թոքատապը պատճառող մանրէին կամ մանրէներու տեսակն ու բնոյթը յայտնաբերելու ընթացքին մէջ կը գտնուին:

Հոնկ Բոնկի մէջ իշխանութիւնները ըսած են, որ թէ վարակումները կարելի եղած է կապել մէկ բժիշկի, որ Չինաստանի մէջ հիւանդներ դարձանա՞ծ է՝ ինքնին հիւանդանոցէ եւ մեռնելէ առաջ ՍԱՐԱԿ հետեւեւեռով («Շնչառական ծանրակշիռ սուր սեփոթում»):

Հիւանդութեան պարագաներ գտնուած են Չինաստանի, Հոնկ Բոնկի, Մինկափուրի, Վիեթնամի, Աւստրալիոյ, Բրիտանիոյ, Գերմանիոյ եւ Մ. Նահանգներու մէջ: Չոհեր արձանագրուած են Հոնկ Բոնկի, Քանտայի եւ Վիեթնամի մէջ: Առնուազն 305 հոգի վարակուած է, առանց սակայն նկատելու ունենալու Չինաստանի մէջ ծայր տուած համաճարակ մը, որ անցեալ Նոյեմբերին սկսած է եւ կրնայ վարակումներուն

աղբիւրը ըլլաւ: Այդ համաճարակին պատճառով 5 զոհ արձանագրուած է: Հոնկ Բոնկի իշխանութիւնները կ'ենթադրեն, թէ Չինաստանի հարաւային կուսակազմի նահանգէն (ուր ծայր տուած էր համաճարակը) բժիշկ մը ժամեր փոխանցած է Հոնկ Բոնկի մէջ պանդոկին նոյն յարկին վրայ 7 այլ հիւրերու՝ նախքան մահանալը: Ապա այդ վերջինները վարակած են Հոնկ Բոնկի, Մինկափուրի եւ Վիեթնամի մէջ հիւանդանոցներու անձնակազմը:

ՀԱՎԱԺԱՐ ԳԵՂ ՄԸ ԿՐԱՅ օԳՆԵԼ

Անմիջական մտահոգութիւններէն մէկը եղած է այն, թէ թոքատապը չէր ազդուեր անթիպիոթիքներէ կամ հակաժահր դեղերէ: Սակայն Առողջապահութեան Համաշխարհային կազմակերպութիւնը ըսած է, թէ կարգ մը պարագաներու Ռիպավայրին հակաժահր դեղը օգնած է:

Հոնկ Բոնկի, Թայուանի եւ Գերմանիոյ մէջ բժիշկներ գտած են ժահր մը՝ առնուած կարգ մը հիւանդներու քիթերէն:

